

Աւշար ցեղի մէջ այժմ աւանդութիւն կայ որ իրենք սե-
րած են Արշակունիներէ(*)։ Մալաթիոյ, և Տէրախի շրջաննե-
րու բնակուած քիւրդերու հեղերէն մէկը կը կոչուի Խաչօվալի,
որ կրօնական առումն ունենալով Խաչեան կը բացատրուի։

Այն մեծ նշանակութիւնը որ «H. F. B. Lynch» կուտայ
Գրգըլ-պաշ քիւրդերուն՝ անկարելի է ուշադրութենէ վրիպե-
ցնել։ մենք առաջ կը բերենք իր կարծիքներէն ամբողջա-
կան կտոր մը՝ քաղուած անգլիերէն «Armenia» գրքի «Poli-
tical and statical» մասէն. (երես 412—425)։

«Ամբողջ մօտաւոր արեւելքի մէջ այս քրդերը Գրգըլ-պաշ
անուանուելով աստուծոյ ինքնութիւնը մը կը սնուցանեն դէպ թրքական
կառավարութիւնը» (**) որուն փորձերը զիրենք միւսխիւսան
դարձնելու համար, դժկամակութիւն կը գտնեն։ Միւսնոյն տոնն
ձգտում մը ունին դէպի քրիստոնեաները՝ ընդհանուր հակա-
մարտութեամբ մը տիրող կարգերու դէմ։

Քրիստոնեայ կրօնը կը յարգեն, և անոր հիմնադիրը կ'ըն-
դունին իրրեւ աստուծոյ մարդեղութիւնը։ Որքան գիտենք,
Գրգըլ-պաշներու կրօնը Արիական մօքի դրոշմը կը կրէ, որ
մարդակերպ աստուածութիւնը կը փնտռէ։ Մովսէսին, Յիսու-
սին, Մուհամմէտին և Ալիին աստուածային բնոյթ կընծայեն։

Իրենց լեզուն թէ և Քրդաշանի մէկ ճիւղը կը պարունակէ,
խառնուածք մը թէ պարսկերէն և թէ հայերէն բառերու, և
կըսուի թէ տիրող քրդական բարբառէն այնքան խոշոր տար-
բերութիւն մ'ունի որ, մէկ բարբառին ծանօթ եղողները, միւ-
սը չեն հասկնար։

Անոնք թլպատութեան ծէսը կը գործադրեն, և կը պահ-
պանեն կարգ մը իսլամական օրէնքներ։

Գրգըլ-պաշները երկրի քրդական ժողովրդի մէջ առանձին
տարր մը կը կազմեն։

(*) Նոյնէ եպիսկ, Չիլիսկիրեան որ այդ կողմերը գտնուած է, և շփու-
մըն ունեցած Աւշարներու հետ, կը պատմէ թէ Աւշարները կուզեն հա-
ւաստել որ իրենք մինչ ցարդ աւանդաբար կը պահեն իրենց մօտ Արշա-
կունիներու սուրն ու թագը։

(**) Խօսքը կը վերաբերի նախորդ Բէթիմին։